Լիբանանի Նախագահը Մայր Տաճարում

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Դեկտեմբերի 10-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Սլեյմանին՝ ուղեկցությամբ ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Լիբանանի նախագահի այցը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր կենտրոն՝ անդրադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրման պատմությանը եւ առաքելությանը հայ ժողովրդի կյանքում: «Մեր ազգային եւ եկեղեցական պատմությունը հարուստ է մեր երկու ժողովուրդների բարեկամության վերաբերյալ վկայություններով: Եւ ուրախ ենք, որ այսօր հարաբերությունները Հայաստանի եւ Լիբանանի միջեւ դարավոր այդ բարեկամության ոգուն համահունչ են զարգանում, վերականգնվում են փոխայցելությունները», - ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընդգծելով, որ Լիբանանը առանձնահատուկ տեղ է գրավում հայ ժողովրդի հոգում:

Իր խոսքում Նորին Սրբությունն ի դեմս Լիբանանի նախագահի շնորհակալություն հայտնեց Լիբանանի իշխանություններին եւ ժողովրդին հայոց մեծ ողբերգությունը՝ Ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու համար, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման գործընթացին ցուցաբերվող զորակցության համար:

Իր հերթին Լիբանանի նախագահը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար, ապա գնահատանքով անդրադարձավ հայերի պատմական ներկայությանը Լիբանանում եւ կարեւոր ծառայությանը երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում: Պարոն Միշել Սլեյմանը հույս հայտնեց, որ Նորին Սրբությունն առաջիկայում կայցելի Լիբանան:

Հանդիպմանը նաեւ անդրադարձ կատարվեց Հայ Եկեղեցու միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված օրհնի եւ հարատեւ զորացնի բարեկամությունը երկու ժողովուրդների:

Այնուհետեւ Նորին Սրբությունը նախագահին առաջնորդեց Մայր Տաճար եւ Մայր Տաճարի թանգարան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ